# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Շիրակի մարզ գյուղ Հայկասար
Հեռ. 098 92-47-06

«05» սեպտեմբերի 2018թ.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 սեպտեմբերի 2018 թվականի N 10-Ա

### ՀԱՅԿԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԿԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05.11.2012 ԹՎԱԿԱՆԻ N 12-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու մասին» թիվ 12-Ն հրամանի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայկասար համայնքի ավագանու ս/թ սեպտեմբերի 05-ի «Հայկասարի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին» թիվ 28-Ա որոշումը*

1.Հաստատել Հայկասարի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմը՝

***հանձնաժողովի նախագահ***՝ Հրաչ Սուրիկի Բարսեղյան Հայկասար համայնքի ղեկավար ( ի պաշտոնե)

***հանձնաժողովի անդամներ***՝ Վանիկ Սերոբյան- ՀՀ Շիրակի մարզպետի խորհրդական

Արմեն Դավթյան-Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

Խաչատուր Ժամկոչյան – Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ